

# ԿՈՄԻՏԱՍԱՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՏԱԿԱԽՈՐՆԵՐԸ



ԱՇՈՒԽՆ ՕՐԵՐ

ՍԵՐ ՌԻ ԶԵՐ

**ՍԵԼՈՎԿ ամպեր վար եկան 1)**

Օրան օրան,

Սարի վրայ շար եկան.

Մազեց տուաօտ,

Պաղեց, սառաւ օդ:

Գոռաց երկինք բուք արաւ,

Ճեւաց, ճեւաց,

Տերուկ երկիր սուց արաւ.

Ճաքեց հեռուն ամպ,

Երկիր դողաց բամբ:

Բողբող արեւ չող կապեց,

Դողաց, սողաց.

Արեւն ամպից քող կապեց,

Վառեց լերան լանջ,

Լերան ցաւասանջ:

Տեղաց անձրեւ մաղ տալով,

Մարմանդ մարմանդ,

Ցոգնած տերեւ շաղ տալով:

Երկիր քուն դրաւ,

Եւ թռչուն թռաւ:

Ցողուած առուն փախ տուաւ

Սողուն, սողուն,

Ջորում մշուշ կախ տուաւ,

Արաւ տարուրեր:

Քամին երաւ վեր,

Մոխիր ամպեր ծիր եկան

Դալուկ դալուկ,

Սարի վրայ ցիր եկան,

Հալեց աշուն օր

Կեանքին սեւաւոր,

(Գրուած 1905 թ. Հոկտեմբեր 20ին, Թիֆլիս, աղջկայ մը ալպումին մէջ :)

1) Յուսաբեր սխալմամբ տպած է՝ վրայ եկան:

**Արեւն այտէն՝**

**Ծիրան ցաւասով՝**

**Լուսիկ-լուսիկ ճըրագեց՝**

**Կաքաւ ոտէն՝**

**Վարդի հոտով՝**

**Ցուսիկ-յուսիկ կըրակեց :**

**Մառի քովէն՝**

**Արդի հովով՝**

**«Չիս կը սիրե՞ս» մըրմընջեց,**

**Հոգիս խորէն՝**

**Սիրու ձառով՝**

**«Չիս կը սիրե՞ս» մըրմընջեց :**

**Աչքի տակէն՝**

**Սըրտիս ակով՝**

**Մաղիկ-ծաղիկ ծիծաղեց՝**

**Գոգի մարգիկն՝**

**Բարակ մարգով՝**

**Գաղիկ-գաղիկ շաղ մաղեց :**

**Ալբէր քուրէն՝**

**Սառն աղբուրով՝**

**Տորոն-տորոն սէր փընջեց,**

**Հուր աշերէն՝**

**Լուռ պաշերով՝**

**Որոն-որոն ներչընջեց :**

ՇՈՒՇԱՆ ՍԻԲՏ

**Շուշան սիրտորդ մաքառեց տարի-տարի՝**

**Կեանքիդ արեւ-օրերում .**

**Ուսուն սէրդ թափառեց արի-արի՝**

**Լանջիդ լուսին-ձորերում :**

Ելրթունքներդ մանուշակ՝ դալար դալար  
Սիրոյ զարուն գովանի,  
Գանգուռ հերբդ անուշակ՝ դալար-դալար  
Համբոյլներուն հովանի:  
Մէրը՝ սէք էր ծագեցաւ՝  
Պատոյտ-պատոյտ դափնիների ճիւղերով,  
Սիրտոք՝ սիրտ յագեցաւ՝  
Կապոյտ կապոյտ բալասանի իւղերով:

Մառիդ ծաղի՞կը՝  
Հէ՛ս ա՝  
Զառ խնկենի.  
Փեսայ.  
Բարիդ բարի՞կը՝  
Գէս ա՝  
Մառ տնկենի.  
Տեսայ:

Ո՞ւր են Մայրե՞ր .  
Սիզուտ վայրեր:  
Ո՞ւր են .  
Կը գայթեն նազերով՝  
Նազուկ կը հայթեն:  
Ո՞ւր ե՞ն:  
Ո՞ւր ե՞ն:  
Մարդե՞կ .  
Դաշտում,  
Դաշտում մարտիկ:

Ես թըռել եմ երկնի չողէն՝  
Իբրեւ պատեր Տիրական.  
Դու ծըլել ես երկրի լորէն՝  
Իբրեւ աընկեր Սիրական:

ԱՄՊ  
Լոյս պատեցին,  
Հոյլերով էր՝  
Քօղուն վերեւում  
Խըռնակ-խըռնակ գիղուելով  
Արծաթ չիթեր են երերում.

Տե՛ս՝ թէ ո՞րքան սիրուն են  
Հեւուկ-սեւուկ հուր ամպեր .  
Ոսկի ճաճանչին՝  
Մէրը գահում աշ-աշին:

Ցոյս կաթեցին՝ ,  
Դոյլերով էր .  
Յօղուն-տերեւում՝  
Կըռնակ կըռնակ սիրուելով  
Ճերմակ-խիթեր են երեւում .  
Տե՛ս՝ թէ ո՞րքան մէրուն են  
Գոպի-գոպի՝ լուր ամպեր .  
Սըրտի կանանչին՝  
Մէրը սահում պաշ-պաշին :

Կարմիր-ցարդով , մանուշակ , (մանուշակ)  
Երկին նաւեցիր՝ ,  
Խաղող-ցողով՝ շոյն էլ վըրան .  
Կանաչ-այգով , անուշակ (ջանուշակ)  
Հերկին բաւեցիր .  
Քաղող-զողով կողն 1) էլ ոլըրան :

Ճա՞կ-ճակ :  
Ի՞՞նչ կը ճաղար , կա՛չաղա՞կ :  
Ի՞՞մ աղաղա՞կ ,  
Ղա՞կ ղա՞կ :

Լա՞գ-լա՞գ :  
Ո՞՞ւր կը կաղաս , պա՛ճաղա՞կ :  
Ի՞՞մ խաղա՞զ ակ ,  
Բա՞զ-բազ : (կ-կ)

Լուսէ բաղիկ արեւմըտիկ ,  
Քովիկ-քովիկ՝ դողին դողին բոյելով .  
Շուքիկ-յուսիկ գետեր տուին .  
Ոսկէծաղիկ արեւմըտին ,  
Հովիկ-հովիկ՝ լողին-լողին չոյելով ,  
Բուսիկ-յուսիկ վէտեր տուին :

Լուսակին տեղ,  
 Թխվար,  
 Արար,  
 Լուսականթեղ անհամար:  
**Եկէ՛ք,**  
 Գերեզմաննե՛ր, գերեզմաննե՛ր  
**Տեսէ՛ք՝**  
 Բեկնե՛ղ քարեր՝.  
 Ժանդ ու ժամուռ՝  
 Հոգին ամուր:  
**Բեկէ՛ք,**  
 Գերեզմաննե՛ր, գերեզմաննե՛ր  
**Հետէ՛ք՝**  
 Սարեր՝ – սարեր.  
 Լոյսը հատե՛լ  
 Յո՞յսը վատել:  
**Ա՛ռ քու ասեղ ու ճերմակ թել,**  
 Ըսկընէ հիւսել.  
 Հիւսել անյաղթ,  
 Գիւսել-քու բարդ:  
 Երբոր առնե՛ս՝ (արնե՛ս)  
 Տե՛ս՝ չը խառնե  
 Յետ չը դառնաւ.  
 Յե՞ս կը դառնաւ,  
 Զը պառնանաւ:

---

Մընո՞ւնդ կուսին.  
 Խա՞լը ոււին՝  
 Հասկեր-հասկեր քաղելով՝  
 Անաշ սրբարում կաղեցիր.  
 Մընո՞ւնդ բարի,  
 Քաջըդ բարի՝  
 Աղդեր-աղդեր մալելով՝  
 Կանաչ հողեկոմ հալեցիր:

---

Դարգարտախո՞ ջեր քրտինքներ՝ այտէն երկիր՝  
 Ալեակ-արեան հոսելով՝  
 Մեր մահը  
 Լացին,  
 Մարեցին.  
 Վեր-անվեհեր՝ սէր-աչիկներ՝ փայտէն երկին՝  
 Փայլակ փայտակ խօսելով՝  
 Իր ճահը  
 Բացին,

Վառեցին:  
 Ամպերն ելեկ՝,  
 Վարադուրել՝,  
 Երկնի կամար՝,  
 Հարսնիս փողերով՝.  
 Անձրեւ չիթեր՝,  
 Բարակ հուրեր՝,  
 Երկրի համար՝,  
 Բուսաց կողերով՝:  
 Հարսնաւորել,  
 Վարսաւորել,  
 Կողերն ի վայր՝ հերարձակ,  
 Բըրգաւորել,  
 Գըրգաւորել,  
 Լողերն ի մայր սերարձակ 1),  
 Այդ ի՞նչ ցայտո՞ւն՝  
 Այտ ծիածան փըրըսկել.  
 Այդ ի՞նչ պայտո՞ւն՝  
 Կայս ծիածան սըրըսկել.  
 Արեւելք արեւմո՞ւս  
 Քաղել արեկութ,  
 Օր ճըրադ, նոր կըրակ,  
 Վառել հասկճութ:

---

Խըցիկիս մօտ ջուր եմ արել մարդ ու մարդ՝,  
 Վարդիկիս հոտ հուր էր դառել բարկ ու բարկ,  
 Ելայ անհոգ (անօք) սարերի գոր շրջելու՝  
 Միր ու ամպեր բլորեցին թըրջելու 2):  
 Մաշճիկիս քով հուր եմ վառել դողունի՝ 3)  
 Վարդիկիս քով գուռ էր ճարել գտղոմի,  
 Լանջէս ի գեր սէր ու չիթեր շաղալու՝  
 Երազ-յոյշեր նուագելու, խաղալու,  
 Լիայ արագ յոյս շափեղով՝  
 Մենաւորիկ բերդիկը դողաց  
 Հովիք բարակ կոյս-սաւէիդով՝  
 Գարդենիկիս երդիկը շողաց:

---

1) Խախ գրած է ի վայր սիրարձակ, յետոյ գ-ը  
 մ-ի եւ ի-ն ե-ի փոխած:  
 2) Գրած է որպաշակս սիր ու եւ ոչ սիրաւ: 3) Այս  
 տօղին մէջ հուր, վառել եւ դողունի բառերան  
 Վերեւ գրած է դուռ, շարել եւ գողոմի, յա-  
 զորդ տօղին մէջ դուռ եւ գողոմի բառերան  
 Վերեւ գրած է հուր եւ դողունի ու յետոյ աւ-  
 րած է:

Քընիկն առաւ աշխն՝  
Կարու մընաց պաշխն՝,  
Ինձ ու քեզ.  
Ես քեզ՝ դու ինձ  
Սէրն եկաւ որոնեց՝  
Բաժինն ընկաւ քաջին:

Յորեն, ցորեն՝ հատիկ, հատիկ՝ քու ճըրագով զատեցիր,  
Որո՞մ, որո՞մ մատիկ մատիկ՝ հուր կըրակով զատեցիր.  
Գլխիդ համար ցամաք երկրում տեղ ու դադար չ'ունեցար  
Հոգու ջահըդ՝ խաչիդ վերայ՝ երկնի սիրով զատեցիր:

Ես սիրեցի անփուշ վարդ,  
Տեսայ ճերմակ, անփուշ վարդ,  
Կըրծքիս վերայ գրի զարդ,  
Հոտուեցի բոյր չունիք,  
Սիրացս մըլսաց բարդ ի բարդ:

Տեսայ կարմիր վշոտ վարդ,  
Աւա՛ղ ճերմըս ծակրանց,  
Արին հոսի վարդն ցարդ,  
Բոյրը մտաւ քմքէս ներս:

Անուց գարուն,  
Մաղիկ բողբով:  
Զուարթ առան,  
Կայտառ խոխնջ,  
Կանաչ զալար,  
Միծաղ ցողիկ (ծիծղուն),  
Վլսակ դալար,  
Դուք ո՞ւր թողիք:

Օր ։ Զապէլ Համբիկեանին  
1) Լսին՝  
Կ'սպասես գըրեմ  
Ու թուղթը մըրեմ:

- 2) Ահա՝  
Գըրիշըս առի,  
Որ մաղթեմ բարի:  
3) Լըսէ՝  
Յաւն ու վիշտ գերէ՝  
Կեանքիդ բաղդ բերէ:  
4) Բաղդը՝  
Փող չէ, որ գանձես,  
Զի չէ, որ սանձես:  
5) Կ'ուզեմ՝  
Կ'ուզեմ քեզ համար  
Տեղ ոսկի տեղար:

6) Ալպա՝  
Նոր ճամբռուդ վերայ  
Թող բաղդըտ եռայ:  
1912, 5/ՓԲ. Կ. Պալիս

Մեր հայ գաւառն է խաւար  
Տդիտութեան է աւար.  
Ուսում տարէք  
Ու լոյս վանէք  
Ու յոյս վանէք  
Հայ տըրէտը վըտարէք:

Պանձա՛ դու, Հա՛յ Միութիւն,  
Գիւղին տուիր հայ դպրոց,  
Մըրաի, մըրաի կուռ հընց.  
Պանձա՛ դու, Հայ Միութիւն,  
Պանձան Հայեր բարեզործ.  
Հայուն՝ դպրոց,  
Հայու՛ դպրոց:

Մեր հայ երկիրն անապատ  
Ու Հայն ընկել պատէ պատ.  
Գութան տարէք  
Ու հող վարէք  
Ու խոր վարէք,

Հողի կուրծքը պատառէք:

Պանծա՛ դու, Հա՛յ Միութիւն,  
Գիւղին տուքը հուր գութան  
Որ գիւղացիք արտ գութան,  
Պանծա դու, Հայ Միութիւն,  
Մածկալ հօտաղ ձայն կուտան՝  
Հայուն՝ դութան,  
Հայո՞ւ դութան:

Մարին անուշ հոտ կը բուրէ  
Կեանքիդ երկնից կատարէն,  
Կալարանըդ (?) կապոյտ ներկէ (թուրէ)  
(այս տողը աւրած է)

Սրեւ ծովիդ կատարէն,  
Կարմիր վարդով ողիդ ցողէ,  
Վառ չուշանով սիրտգ քողէ  
Ոսկի ասուն (?) հոդիդ (?) բովէ (?)  
Արեւ թափէ (ցողէ)

Ծաղկէ վարդի պէս կարմիր  
Վարդի պէս 1) եռանդդ բուրէ,  
Ծաղկէ չուշանի պէս ճերմակ,  
Ճռչանի պէս միարդ սրբէ,  
Ծաղկէ մանուշակի պէս կապոյտ,  
Մանուշակի պէս կեանքը վարէ:  
(Մաղկէն) Վարդէն քաղէ կարմիր ողի,  
Աև չուշանէն ճերմակ սիրտ,  
Վիուսուն ծաղկէն ոսկի հոդի,  
Մանուշակէն կեանքը կիրթ:

ՆՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վարդէն հայցէ կարմիր ողի,  
Վառ չուշանէն ճերմակ սիրտ,  
Սուսուն ծաղկէն ոսկի հոդի  
Անթառամէն՝ կեանքը կիրթ:

Մանուշակըդ անուշ բուրէ (հերկէ) (?)  
Կեանքին երկնի ծաւալին (?)  
Փաւասանըդ կապուտ թորէ (ներկէ)  
Արեւ ? ծովիդ կապուտ (ցողէ) կապէ

### ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վարդէն քաղէ կարմիր ողի,  
Վառ չուշանէն ճերմակ սիրտ,  
Սուսուն (2) ծաղկէն ոսկի հոդի,  
Անթառամէն կեանքըդ կիրթ:

1914, 16/3 Սեպտեմբեր

Մանուշակըդ ծաղէ բուրէ 1)  
Կանաչ կեանքըդ անուշ բուրէ  
Կեանքիդ երկնի ծաւալին 2)

Բաւասանըդ արեւ (ցողէ) թափէ  
Կապոյտ ալին թորէ ?  
.... (անթիթենիկ) կատարին  
Հովը հենչ ?, սարը? թեւէ

1) Վարդ բառը աւրած է, վրան գրած է բառ մը՝  
անթիթենիկ, հարթէ?:  
2) Վերեւը գրած է սարի:  
(4 սար եւս՝ ինչ աւրաւած, գծուարդնենիկ)

1) Խախ գրած է բարի հերկէ, յետոյ աւրած եւ  
վերեւը գրած՝ ծաղէ բուրէ: 2) կեանքիդ երկնի  
աւրած է:

**Մառը? աեւէ**

Կանաչ խոտիկ խատուտիկ  
Գունեղ ծաղիկ պատուտիկ  
Հովը հեւէ ծովը թեւէ  
..... .... ..?

---

**ԱՊՈԹԲ (1)**

(Նուեր Օրիարդ Լուիզ Գալուքնեանի)

Վա՛րդ, դու կաթէ՛ կարմիր ողջոյ,  
Ճերմա՛կ շուշան՝ սիրու ու հոգիդ.

**Մառուշա՛կ**  
**Անուշակ՝**  
**Գուրգուրէ՛**  
**Բւ բուրէ՛:**

Տո՛ւր, սուսունիկ՝ ոսկի արեւ,  
Յո՛յս անթառամ՝ կեանք յարատեւ:

**Օրէ օր**  
**Նորէ նոր**  
**Յար գարուն**  
**Ջարդարուն:**

1914 25/ԺԱ. Կ. Պալիս

---

ՎԵՐԱԽԻՆ ՏԵՏՐԻՆ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԵՆ

Նիր'էէ, օ՛ր իմ, նիր'էէ,  
Զաւակ պագաւ.  
Աշուկ-աշուկ պահուկներէն յաղաւ.  
Նիր'էէ, քե՛լուն, նիր'էէ,  
Կանաչ կանճաւ 1), կանաչ-կաքաւ.

---

1) Խախ գրած է Նոր օրհներդ, յետոյ աւքած է.  
Խւ վերեւը գրած՝ Աղօթք:

1) Այս բառին վերեւը գրած է՝ հակաւ:

Նիր'էէ գիշ'լուն, նիր'էէ,  
Ճանակ ծաղեաւ, ճանաչ ծաղաւ:  
Նիր'էէ, ճան իմ, նիր'էէ,  
Արեւ ծիծղուն  
Գիւա գիւա ձագիկներով,  
Նիր'էէ, չան իմ, նիր'էէ,  
Ծաղիկ ծածկոց,  
Նիր'էէ, պա՛յն իմ, նիր'էէ,  
Քաղիկ ծաղկոց.  
Նիր'էէ, ճան իմ, նիր'էէ,  
Հոտին հոտուն  
Մարգիկ մարգիկ սրտիկներուն,  
Նիր'էէ, ա՛լ իմ, նիր'էէ,  
Հօրիկ-Հոթուն,  
Նիր'էէ, գա՛լ իմ, նիր'էէ,  
Քընիկ խորհուն:

Նե՛նի, եա՛ւրում, նե՛նի,  
Շափաք ախոր,  
Էշբ-ըշբ կէօմիւլէրէ պահուը  
(սամքոր):

Նե՛նի, եէօրիւմ, նե՛նի,  
Եէշիլ-կագոր,  
Սեննի/նե՛նի, եէօրիւմ, նե՛նի:  
Եշն եախոր  
Նե՛նի, նա՛նը, նե՛նի,  
Կիւնէշ կէօլուի,  
Սալէը-սալէը էօմիւլէրէ  
(ակէօլուի),

Նե՛նի, սէօգիւմ, նե՛նի.  
Չիշկ եօրքիւ.  
Սեննի/նե՛նի, կէօգիւմ, նե՛նի,  
Պիշկ-կէօրսիւ. (պիշէկ-կէօրսիւ,  
հնառուը)

Նե՛նի, ժա՛նը, նե՛նի,  
Քօբան էստի  
Պապչ պապչ իսրէլէրէ  
Նե՛նի, տի՛լիմ, նե՛նի,  
Սույու սէրին,  
Սեննի/նե՛նի, պիլիմ, նե՛նի,  
Ույու տէրին:

---

Թագուհին ի կայծ  
Յասուեաց ի՞յսած,  
Ի վան ի ծորի  
Դալար ի նորի  
Հոգայ'  
Տրկայ'  
Ի փայլ:

Պակուտին մարիկ,  
Յաշունիս վարիկ,  
Ի պուռ ի գոյին,  
Խանդոց ի խորին  
Ողայ'  
Շողայ'  
Ի վառ:

Պագունին ի պայծ,  
Լուսեղաց ի փայծ,  
Իջանի սորի,  
Տայ լար ի խորի,  
Գողայ'  
Ողայ'  
Ի դայլ:

Կոռմէ, ուստի կուբաս  
Կոռւ - ունկն, Ուս - տիւ - ն Գող - Ասն:

(Լուսանցքին վրայ)

Քրիստոս	Ց - իւ Ռւս	Ցիս - Ռւս
Քրիստոս	Գ - իր Տաս	Գիրս Տաս
Գրիստոս	-	Գիր - ուս - տաս
Գիր յիս տաս	Ռւս	
	Տոս - ուս	

Ո՞վ Զուր՝ զա՞նն ի վայր՝  
Ալին - ալի՞ն բանա՞յլ,  
Գե՞տ, մի՞ վետ ի վետ՝  
Քո Արարի՞դ ի տես:  
Ո՞վ Զուր՝ սա՞նն ի սայր՝  
Հալին - հալի՞ն դանանա՞յլ,  
Գե՞տ, մի՞ յետ ի յետ՝  
Քո վարարիդ վետ:

Մե՞րձ, մերձ, ո՞վ Երկիր՝  
Երկիրն ի հեղ վասեալ,  
Սա սէր յիս յորդի՝  
Զոր հանեցայ ի լայս:  
Ճե՞րձ, հե՞րձ, ո՞վ Երկիր՝  
Երկիրն ի սէղ յասեալ  
Դու Տէր իմ Որդի՝  
Յոր անեցայ ի յայս:

Երկնե՞ր Երկիր.  
Երկըն էր՝  
Երկի՞ն - Երկիր յերկի՞ն՝  
Երկի՞ն - Երկիր Երկնե՞ր - Երգէր  
Եւ ծընէր՝  
Մո՞վ - ծիրանին :

Հո՞ւր - ծով - ծիրանի.  
Երկըն ի ծովուն յալիս՝  
ԶԱլին - ծով - ծիրանին՝  
Հալին սնէր ըզկարմբրիկ զեղէզնիկ՝  
Մո՞վ - ծով սիրանի:

Ընդ եղեգա՞ն - փազ՝  
Փո՞ղ - բաց բացե՞ն՝  
Դո՞զ - դոզ - մալխ ե՞լ անէր ի ծոց ի ծոց՝  
Ի գով ի գով ձեղ անի:

Եւ ի բացո՞յն - վագէր՝  
Վազէր Ռէ - Մազէր՝  
Շէկ - պատամ - եկիկ՝  
Ի վազ ի վազ հոլ - հոլանի:

